ՈԼՈՐԱԶԱՐԴՈՎ ԽՈՅԱԿՆԵՐԸ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միջնադարյան հայ ճարտարապետության կառուցվածքների սյուների վրա հանդիպող խոյակների մեջ կան ոլորազարդ ունեցող խոյակներ, որոնք երբեմն նման են հոնիականներին (նկ. 1)։



Նկ. 1. Էրեխթեյոնի խոյակ

Անհրաժեշտ է ընդգծել, որ ոլորազարդ ունեցող խոյակները ոչ միայն տարածված էին միջնադարյան հայ ճարտարապետության մեջ, այլև հաճախ բացառիկ ինքնուրույնություն ունեին։ Այլ ժողովուրդների միջնադարյան հարտարապետության հուշարձաններում դրանց նմաններին մենք չենք հանդիպում։ Այսպես օրինակ՝ Դվինի (նկ. 2) խոյակները (կաթողիկոսի պալատից) և Զվարթնոցի խոյակներն (նկ. 3) իրենց համանմանները չունեն։

Չնայած տարբեր դարաշրջաններում ստեղծված խոյակների նմանությանը, որ հետևանք է ոլորազարդի առկայության, նրանք հաճախ տարբերվում են միմյանցից զարդի մանրամասներով և, գլխավորապես, գեղարվեստական մեկնաբանությամբ։

Անկասկած, որքան հին է ճարտարապետական հուշարձանը, այնքան ավելի նրա սյուների ոլորազարդով խոյակները մոտ են իրենց սկզբնական մտահղացմանը։

Եթե ուշադրություն դարձնենք միջնադարյան հայկական շատ խոյակների (Արուճ, Զրվեժ, Գողնի և այլն) ոլորազարդերի գծի շարժման վրա, ապա նրանք երկրաչափական լեզվով ասած՝ ունեն Արքիմեդի պարույրի գծագրություն կամ, եթե բացատրելու լինենք նմանությամբ՝ կանոնավոր ոլորած թոկի ձև (նկ. 4ա)։ Իսկ անտիկ սյուների, օրինակ. Գառնիի տաճարի խոյակ-

ները, ունեն այնպիսի ոլորազարդեր, որոնք իրենց շարժումով նման են լոգարիթմական պարույրի, այսինքն՝ ունեն կոնի ոլորումից ստացված ծավալի լայնակի կտրվածքի գծագրությունն (նկ. 4բ)։ Բայց Գառնիի խեյակների ոլորազարդերը պարույրաձև գալարվում են ոչ միայն մեկ հարթության վրա (ինչպես միջնադարյան շատ այլ խոյակներում), նրանց պարույրի աչքը, կարծես թե ներսից ինչ-որ հնման հետևանքով շարժվում է առաջ, դեպի գիտողը (նկ. 5)։



Նկ. 2. Դվինի կաթողիկոսարանի խոյակը

Նկ. 3. Զվարթնոցի խոյակը



Նկ. 4ա և 4բ



Նկ. 5. Գառնիի տաճարի խոյակը

Այսպիսով, խոյակների վրա միջնադարում, հազվադեպ բացառությամբ (Իշխան), իրագործում էին աչքի շուրջը միօրինակ պտույտ ունեցող ոլորազարդ, իսկ Գառնիի տիպի անտիկ տաճարների սյուների վրա գնում էին, պատկերավոր ասած, լոգարիթմական պարույրով ոլորազարդ, որը երբեմն կարծես թե պտուտակի պես շարժվում է դեպի առաջ։

Լոգարիթմական պարույրը մի գիծ է, որ երկրաչափորեն ճշգրիտ լինելով, միաժամանակ կարծես ունի նկարչի ձեռքի ազատ շարժումով գծված գեղեցիկ կորի հատկություն։ Ֆորմուլան և արտիստական նույնը զգացողությունը արվեստի ստեղծագործություններում հաճախ զուգորդվում են միմյանց։ Պատահական չէ, որ այդպիսի պարույրը, որը բնության մեջ հանդի-

պում է խաղողի որթի բեղիկների, որոշ խխունջների, խոյի եղջյուրների վրա և այլուր, իր անսպասելի դրավչությամբ արժանանում է մեր ուշադրությանը։

Անտիկ նմուշներին նախորդող հոնիական խոյակները սովորաբար անվանում են նախահոնիական։ Դասականների համեմատությամբ նրանք փոքր-ինչ պրիմիտիվ են։ Բայց, ըստ երևույթին, դեռևս ոլորազարդ ունեցող խոյակների ստեղծման շրջանում բուն ոլորազարդերը ծագել են իբրև էլեմենտներ, որոնք բնության ընդօրինակմանը ամենից ավելի են նպաստում։

Ոլորազարդերի նմանողական առանձնահատկության մասին կա Վիտրուվիոսի բացատրությունը. «...խոյակների վրա տեղավորեցին ոլորազարդեր, որոնք դանդրացրած խոպոպների նման կախվում էին աջից և ձախից, նրանց առջևի մասերը զարդարեցին կիմատիներով և պտղաշղթաներով, իսկ ողջ բնի վրայով անցկացրին սմուանացած կնոջ զգեստի ծալքերի նման վայր իջնող ակոսիկներ (կանելյուրներ)»[1]։

Տասնհինգ դար անց, մի այլ ճարտարապետ՝ Ալբերտին, իր գրքում գրում է, որ հոնիացիները խոյակներին ավելացնում էին «ծառի կեղևը, որը երկու կողմերից կախվելով և խոպոպի նման ոլորվելով, ամփոփում էր դավաթի (էխինա) կողքերը»[2]։ Նման բացատրության համար Ալբերտիին որպես հիմք են ծառայել այն ժամանակ յայնորեն ուսումնասիրվող անտիկ աղբյուրները։ Բայց բերված բացատրությունները մինչև վերջ համոզեցուցիչ չեն։ Վիտրուվիոսի սուտ դա ավելի շուտ հոնիական օրդերի դեղեցիկ իդեալականացում և նրա կանացի համաչափությունների ընդգծում է, մասնավորապես, ոլորազարդով խոյակի իդեալականացում։ Իսկ Ալբերտին խոյակի և նրա ոլորազարդի ծագումը կապում է վաղուց ի վեր գոյություն ունեցող այն բացատրության հետ, համաձայն որի ճարտարապետական բոլոր ձևերը ծագել են փայտից կամ փայտե կառուցվածքներից, իսկ ոլորազարդը՝ ծառի կեղևից։

Հոնիական խոյակների ծագման մասին հին ճարտարապետների այս փաստարկների ինքնատիպությունն ու դեղեցկությունն ընդունելով հանդերձ, թվում է, թե ավելի հավանական կլինի ենթադրել, որ ոլորազարդ ունեցող խոյակներն սկզբնապես հանդիսացել են խոյի և նրա եղջյուրների ընդօրինակություն։ Այս է ցույց տալիս և այն հանգամանքը, որ հայերեն «խոյակ» բառը ծագում է «խոյ» (որն ունի պարուրաձև եղջյուրներ) բառից։ Այդ պատճառով էլ թեև այժմ այդպես են կոչվում բոլոր տիպերի խոյակները, բայց տառացիորեն այդ անվանումը համապատասխանում է ոլորազարդ ունեցող խոյակին։ Բացի այդ, այս բացատրությամբ զբաղվելով, հիմք կա ենթադրելու, որ այդ տիպի խոյակները ստեղծվելիս հետապնդվում էր ոչ միայն կոնստրուկտիվ, այլև նմանողական-արտահայտչական նպատակ։

Հնարավոր է, որ այս կապակցությամբ բացատրություն կպահանջեն խոյակի կոդային մասերը, որոնց մակերևույթը, ըստ Ալբերտիի, ունեն «ծառի կախ ընկած կեղևի ձև»։ Բայց մեր կարծիքով դա ավելի շուտ հիշեցնում է ոչ թե ծառի կեղևի մակերևույթ, այլ խոյի՝ բնական վիճակում գտնվող գեղմ։

Կարելի է նշել նաև, որ խոյակների վրա կենդանիների գլուխ պատկերելու սովորությունը, գոյություն է ունեցել Արևելքի մյուս երկրներում ևս։ Այսպես, Շոշ քաղաքում եղած ապադանի շքեղության գործում էական դեր էին խաղում այն այուները, որոնք ավարտվում էին երկու ցրոտոնների՝ ոսկեզօծ եղջյուրներ ու ականջներ ունեցող ցուլերի ձևով (նկ. 6)։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ «խոյակը» իր ստեղծման արշալույսին, պարտադիր կերպով ունեցել է պարուրաձև ոլորազարդեր, որոնք ընդօրինակված էին խոյի եղջյուրներից, իսկ այլ ձևի՝ առանց ոլորազարդի խոյակների առաջ դալուց հետո այդ նույն անունը տարածվում է նաև նրանց վրա, պահպանվելով մինչև օրս և նշանակելով առհասարակ խոյակ՝ կապիտել։

Եթե ոլորազարդով խոյակների ծագման մասին վերը շարադրված ենթադրությունը ճիշտ է, ապա հնարավոր է, որ խոյի եղջյուրների սիմվոլացումը Հայաստանում կապված է նրա՝ վաղուց ի վեր զարգացած ոչխարաբուծության երկիր լինելու հանգամանքի հետ։ Անհրաժեշտ է նշել, որ պարուրաձև զարդաքանդակը հանդիպում է հնագույն ծագում ունեցող բազմաթիվ այլ իրերի վրա։ Այսպես, եղջյուրների պարուրաձև պատկերներ կարելի է տեսնել վիշապների բարձրաքանդակների վրա։ «Հայասան հայերի բնօրրան» գրքում Դր. Ղափանցյանը բերում է կրկնակի ոլորազարդի օրինակ կահկարասու շրջանակի մի բեկորի վրա, Ալթին-Թեփեի (Հայասա) պեղումներից (VIII դ., մ.թ.ա.)։ Նկարի վրա երևում է, որ ոլորազարդերն այստեղ ունեն լոգարիթմական պարույր։

---

[1] Витрувий, кн. четвертая, § 7, Москва, 1936, էջ 79։

[2] Альберти, кн. седьмая, гл. 6, Москва, էջ 223։



Նկ. 6. Շոշի ապաղանի սյուներ

Բայց «հոնիական ոճ» ասելով հասկացվում է այն ոճը, որն ստեղծվել էր հունական նեղուցների փոքրասիական ծովափին գտնվող հին հունական բնակավայրերում։ Մինչդեռ հավանական է, որ ոլորաձևազարդով խոյակներ ունեցող շինություններ կարող էին հանդիպել ոչ միայն Փոքր Ասիայի մերձափնյա մասերում, այլև ծովափից շատ ավելի հեռու։ Եվ իսկապես, հին հայկական կուլտուրային նվիրված իր աշխատության[1] մեջ Կ. Վ. Տրեվերը բերում է մ. թ. ա. VII դ. վերաբերող այդպիսի մի շինության օրինակ՝ Դաուգուկտարի դամբարանը՝ փորված Կարանդունի (Ֆարս) ժայռի մեջ։ Դամբարանն ունի հոնիական ոճի, այսինքն ոլորազարդավոր խոյակներով պսակված չորս սյունանի ճակատ (նկ. 7)։ Այդ դամբարանը Տրեվերն անվանում է «շատ ավելի հին երևույթ, անտիկ աշխարհից մեզ հասած համանման ձևերի համեմատությամբ»։ Իսկապես, փոքրասիական ծովափին գտնվող հոնիական ամենավաղ տաճարներից մեկը՝ Արտեմիդի տաճարը Եփեսոսում, պատմությունը վերագրում է մ.թ.ա. VI դարին։ Այնուհետև, Կ. Վ. Տրեվերը նշում է, թե այդպիսի խոյակի տիպի տեղական, առաջավոր ասիական բնույթը հաստատվում է նրանով, որ մինչև օրս էլ այն ավանդաբար պահպանվում է տեղական ճարտարապետության մեջ, «որ Հայաստանի լեռնային շրջաններում, ինչպես նաև հին Մարաստանի տերիտորիայում, գյուղացիների տներն ունեն այս տիպը վերարտադրող խոյակներով սյուներ»[2] (նկ. 8)։ Արդյոք վերը շարադրվածը չի՞ խոսում այն մասին, որ հին հայերը, Փոքր Ասիայի մյուս ժողովուրդների հետ միասին մասնակցել են անտիկ ճարտարապետության այն մասի ստեղծմանը, որի ակունքները ծագել են արևելքում և արտացոլվել են դասական ճարտարապետության վերջնականապես ձևավորված տիպերում։ «Հոնիացիների՝ արևելքի ժողովուրդների հետ ունեցած կենդանի հաղորդակցման պայմաններում,— գրում է ճարտարապետության պատմաբան Հարտմանը,— նրանք ենթարկվում էին արևելյան արվեստի անմիջական ներգործություններին, որոնք իրենց արտահայտությունն են գտել, գլխավորապես, խարիսխի հատուկ ձևի ստեղծման մեջ... և այնուհետև խոյակներում ոլորազարդեր (խխունջներ, պարույրներ) մտցնելու մեջ, որ հայտնաբերվում է խեթերի և ասորեստանցիների մոտ։ Ատտիկական հողի վրա տեղափոխված հոնիական ոճը հաս-

[1] К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении (IV в. до н. э., II в. н. э.). М.—Л., 1953.

[2] Նույն տեղում, էջ 74, 75։

նում է իր ամենակատարյալ արտահայտությունները և միաժամանակ առանձին ճարտարապետական մասերի յուրահատուկ ձևավորմանը»[1]։

Նկ. 7. Դաուղուկտարի դամբարանի ճակատը

Այս տողերը հիշեցնում են ուրարտական ճարտարապետության խարիսխները (նկ. 9)[2]։ «Բավական է հայացք ձգել ասիական ճարտարապետական հուշարձանների վրա,— գրում է Օգյուստ Շուազին,— համոզվելու համար, որ հոնիական օրգերը նրանց հետ ընդհանուր աղբյուր ունի։ Հոնիական սյան բոլոր դետալները, նրա ոլորազարդանի խոյակները, ակոսիկները և խարիսխները զարմանալի ճշտությամբ վերարտադրված են Պտերայի խեթական քանդակների վրա. այսինքն Եփեսոսի տաճարի կառուցումից շատ առաջ»[3]։

Շուազիի այս դիտողությունը հիշեցնում է մեր պատմության հնագույն շրջանում հայերի (հայասների) ու խեթերի հարևանության և կուլտուրական կապերի մասին[4]։ Կարելի է բերել այլ նման վկայություններ ու ենթադրություններ, որոնք հուշում են ոլորազարդավոր խոյակներով սյուներ ունեցող կառուցվածքների ոճի ստեղծման մեջ հնագույն հայերի հնարավոր մասնակցության մասին։ Բերված տվյալներն ու եզրակացություններն առաջին հայացքից կարող են վիճելի թվալ, քանի որ դրանք խախտում են հոնիական օրգերը անպայմանորեն հոնիական հույներին պատկանելու վերաբերյալ արդեն հաստատված տեսակետը։ Սակայն մենք դժվարանում ենք կասկածել «խոյակ» բառի բացատրության վրա, որ տալիս է մեզ աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ հայերենը։ Մենք քիչ տվյալներ ունենք հեռավոր դարերում մեր մշակույթի անցյալը պարզ պատկերացնելու համար։ Բայց այդպիսիք այնուամենայնիվ կան։ Պատկերացնենք ոլորազարդավոր խոյակներ ունեցող ճարտարապետական հուշարձանների համեմատաբար նոսր շղթան հնարավոր համարելով անել որոշ ենթադրություններ։ Հիշենք պարույրաձև ոլորազարդ ունեցող խոյի գլխով վիշապին, այն վիշապներից, որ գտնվել են լեռներում, Գեղարդի հնագույն ջրամբարի մոտ (նկ. 10)։ Բազալտից քանդակված այդ վիշապը եղել է ոչ թե պառկած, ինչպես հիմա է, այլ ջրի մոտ կանգնած, գա մի կոթող է, որ վերջանում է պարույրավոր

[1] Гартман, История архитектуры, Москва, 1936, էջ 42։
[2] Государственный Музей Грузии.
[3] Шуазн, История архитектуры, Москва, 1935, էջ 234։
[4] Տե՛ս Г. А Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1948, էջ 101։



Նկ. 8

Նկ. 9. Ուրարտական սյուների խարիսխներ. a սկիզբը, b միջին մասը, c վերջը (Վրաստանի Պետական թանգարան)

Նկ. 10. Վիշապ (Գեղարդի ջրամբարի մոտից)

եղջյուրներ ունեցող խոյի գլխով։ Իհարկե, սա խոյակ ունեցող հիմնական սյուն չէ, բայց հեռու չէ նրանից։ Սա անալոգիա չէ, այլ արդեն մոտենում է իր վրա հատուկ պաճուճանք՝ ոլորագարդ ունեցող սյան գաղափարին։ Եթե Գառնիի տաճարը Հայաստանի տերիտորիայի վրա պատահական ճարտարապետական երևույթ չհամարենք, ինչպես անցյալում ապարդյուն ջանում էին անել որոշ ուսումնասիրողներ, ապա պարզ կլինի, որ նրան նախորդել են նման տաճարային կառուցվածքներ, նույնպես ոլորագարդանի խոյակներով։ Այդ մասին եթե ոչ ուղղակի կերպով, համենայն դեպս բավարար հիմնավորվածությամբ վկայում է Կարանգունի արդեն հիշատակված քարանձավային դամբարանի ճակատը։ Այս դամբարանի սյուների նախահոնիական խոյակներն ունեն այն առանձնահատկությունը, որ սրանց ոլորագարդերը իրենց մեծ մասով պառկած են սյան բնի վրա, համարյա այնպես, ինչպես խոյի գլուխը վիշապ-կոթողի բնի վրա։ Տարբերությունն այն է, որ վիշապի վրա ոլորագարդը ոչ թե իր մեծ մասով, այլ ամբողջովին է գտնվում կոթողի կլոր բնի վրա։ Այստեղ էլ նմանությունը լիակատար չէ, բայց արդեն կարելի է ենթադրել, որ կոթողի պաճուճանքը սյուների խոյակների վրա օգտագործելու հարցում եղել են անցումներ։ Միանգամայն հնարավոր է նաև, որ Գառնիի տաճարի կառուցումից հետո էլ շինվել են ոլորագարդ խոյակներ ունեցող սյուներով տաճարներ։ Սակայն դրանք առայժմ մեզ հայտնի չեն։

Միջնադարյան հուշարձաններից հայտնի են՝ Դվինի խոյակը, որ ունի աչքի առանցքի երկայնքով զսպանակի նման ձգվող հատուկ ոլորագարդ, Զվարթնոցի խոյակները, որ ունեն կոմպոզիտային բնույթ և ըստ Արքիմեդի պարույրի գալարվող ոլորագարդեր, սրանցից բացի Արուճի, Պտղնիի, Ջրվեժի և այլ խոյակները, որոնք նույնպես ունեն Արքիմեդի պարույրի նման կառուցված ոլորագարդեր (նկ. 11)։



Նկ. 11. Պտղնիի որմնամույթերի խոյակները

Այս շարքից հատուկ ուշադրություն է գրավում Դվինի խոյակը (նկ. 2)։ Այն տարբերվում է մյուսներից նրանով, որ ոլորագարդերի զարգացումը ընթանում է ոչ թե պարույրով, այլ շարժվում է առաջ, ինչպես գլանաձև զսպանակ։ Չնայած ոլորագարդերի պարույրաձև շարժման բացակայությանը, այս խոյակը մյուսներից ավելի ցայտուն է ընդօրինակում խոյի եղջյուրները։

Շարադրված դիտողությունները իրավունք են տալիս բավարար հավանականությամբ ասելու, որ ոլորագարդով խոյակները կիրառվել են Հայաստանում անհիշելի ժամանակներից ի վեր։ Դա եղել է սյուների պաճուճավորման սիրված ձև ժողովրդական ստեղծագործության մեջ։ Պետք է ասել, որ միջնադարում այդ թեման, ինչպես տեսնում ենք, կիրառվել է ամենաբազմա-

զան և սրամիտ ձևերով։ Սկզբում ոլորազարդը, որպես խոյի եղջյուրների ուղղակի ընդօրինակություն — մոտ է եղել լոգարիթմական պարույրին և միայն հետագայում, հատկապես միջնադարում, երբ նրա նմանողական առանձնահատկությունն սկսեց ոճավորվել և տարբերակվել, բարի վրա ոլորազարդերն սկսեցին փորել գլխավորապես ըստ Արքիմեդի պարույրի (Զվարթնոց, Գագկաշեն և այլն)։

Ոլորազարդով խոյակի հետաքրքիր, բայց բարդ տարատեսակներից է Զվարթնոցի տաճարի ներսի կիսաշրջանաձև կամարաշարքի խոյակը։ Իհարկե, այստեղ, ի տարբերություն Դվինի խոյակի, առկա է բացարձակ շեղում խոյի գլուխը և նրա եղջյուրները վերարտադրելուց։ Այս խոյակի կոմպոզիցիան հիշեցնում է Վիտրուվիոսի պատմածը Կալլիմաքոսի կողմից կորնթական խոյակը հնարելու մասին։ Զվարթնոցի խոյակի վրա մենք իսկապես տեսնում ենք Վիտրուվիոսի հիշատակած այն զամբյուղը, որը կորնթական խոյակի վրա չկա։

Ինչպես որ կոմպոզիտային խոյակը հանդիսանում է ածանցյալ հոնիականից և կորնթականից, այնպես էլ Զվարթնոցինը՝ խոյատիպ խոյակի (կապիտել) ածանցումներից մեկն է։

Հայերի ճարտարապետական ստեղծագործության բարձր մակարդակը, հատկապես հելլենիստական շրջանում, անհնար կլիներ առանց զարգացած գիտության, առանց զանազան գիտությունների և հատկապես երկրաչափության վրա հիմնված վարպետության։ «Տարածության գիտությունն» իմանալը անհրաժեշտ էր ճարտարապետին, որը կոչված էր ստեղծագործելու կարկինի, լարի և հատիչի օգնությամբ։

Հիշելով հին մարդկանց ակնածանքը երկրաչափական գիտելիքների նկատմամբ, սկսում թվում է, թե ոլորազարդի պարույրները նրանք պատկերացնում էին իբրև շարժվող մի բան։ Այստեղ առկա է այդ շարժումը մի ծայրից (այսինքն այնպես, ինչպես աճում են բնականում խոյի եղջյուրները) վերարտադրելու երկրաչափական ճշգրտությունը։ Գառնիի տաճարի խիստ կշռադատված լինելու մասին կարելի է դատել թեկուզ միայն նրա խոյակներից, շարժում արտահայտող նրանց ոլորազարդերից։

Այն հանգամանքը, թե ինչպիսի խնամքով է ստեղծված տաճարը, առաջ է բերում ակնածանք այն կառուցող վարպետների՝ ժամանակի իսկապես իմաստուն ճարտարապետների նկատմամբ։

О КАПИТЕЛЯХ С ВОЛЮТАМИ В АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЕ

М. В. ГРИГОРЯН

(Резюме)

В статье сделана попытка рассмотрения происхождения формы капителей с волютами в армянской архитектуре. На многих капителях с волютами средневековой архитектуры завивание волют однообразным вращением вокруг глазка идет по спирали Архимеда (Звартноц, Птгни). Капители же Гарнийского храма имеют волюты, близкие по движению к пульсирующей логарифмической спирали. Здесь видна геометрическая тщательность передачи движения с одного конца, примерно так, как растут рога барана. На подражание капители с волютами голове барана указывает армянское название капители — «хойак», происходящее от слова «хой», которое означает баран. Отсюда можно допустить, что «хойак» на заре своего зарождения имел обязательный элемент волюты. Прямое подражание голове барана со спиральными рогами можно обнаружить на вишапе — стелле, находящейся близ Гегарда (рис. № 10). Протоионические капители колон Карангунской гробницы имеют волюты, лежащие большей своей частью на стволе колонны, т. е. примерно так, как находится голова барана со спиральными рогами на стволе вишапа (рис. 7). Поэтому можно предположить, что был преемственный путь использования венчания стеллы для капителей колон.

Свидетельства ученых об истоках происхождения ионического стиля на Востоке от искусства хеттов, ассирийцев, повторение в течение многих веков капителей с волютами на монументальных зданиях и в армянском народном жилье, из которых некоторые прямо подражают голове барана (Двин, рис. 2), приводит к возможному допущению, что «хойак» есть подражание голове барана и что древние армяне вместе с другими народами Малой Азии являлись участниками создания той части классической архитектуры, истоки которой возникли на Востоке.